ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«05» սեպտեմբերի 2025 թվականի №2049-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Լ.ՄԱԴՈՅԱՆ ՓՈՂՈՑ 33 ՇԵՆՔ 9 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 58.07 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ և ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1333-0001) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի, շինությունների հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Գյումրի քաղաք, Լ.Մադոյան փողոց 33 շենք 9 բնակարան հասցեագրությամբ 58.07 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությանը և դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1333-0001) պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Մյասնիկյան փողոց, 10/3 բնակելի տուն**

2025-09-05 16:32:22 GMT+4

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«04» սեպտեմբերի 2025 թվականի № 2068-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24–Ի №1888-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի հուլիսի 30-ի №1811–Ա որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 24–ի «Գյումրի քաղաք, Այգաբացի 4-րդ շարքի հարևանությամբ գտնվող 74.3 քառակուսի մետր մակերեսով հողամասին համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №1888-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) վերնագրում և որոշման կայացման մեջ «74.3» թիվը փոխարինել «61.92» թվով:

2025-09-04 16:56:20 GMT+4
[illegible] է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«__04__» __սեպտեմբերի__ 2025 **թվականի** N_2047-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 99/4 ՀԱՍՑԵԻ 0,75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի N 99/3 հասցեի 69,6 (վաթսունինն ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և դրա վրա առկա շինությունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գայանե Միշայի Սարգսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18062014-08-0017 վկայական):

Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի N 99/4 հասցեի 0,75 (զրո ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01092025-08-0001 վկայական):

Քաղաքացի Գայանե Միշայի Սարգսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի N 99/3 հասցեի հողամասին կից Ղորղանյան փողոցի N 99/4 հասցեի 0,75 (զրո ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը աստիճաններ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրվող հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, $48^1$-րդ հոդվածի 6-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Միշայի Սարգսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հունիսի 28-ին N 10570 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Գայանե Միշայի Սարգսյանին աստիճաններ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի N 99/4 հասցեի 0,75 (զրո ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 5(հինգ) տարի ժամկետով և տարեկան վարձավճարի չափ սահմանել 2250 (երկու հազար երկու հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
    1) Պարտավորեցնել քաղաքացի Գայանե Միշայի Սարգսյանին.
    2) Աստիճաններ կառուցելու համար սահմանված կարգով Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացնել հաստատված ձևի հայտ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար:
    3) Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի և այլ նորմատիվ, իրավական փաստաթղթերի պահանջների համաձայն, սեփական միջոցներով պատվիրել նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինթույլտվություն:
    4) Շինաշխատանքները նախագծով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

3. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել քաղաքացի Գայանե Միշայի Սարգսյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գայանե Միշայի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**2025թ. ք.Գյումրի**

Восстановимая подпись

X

Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840 **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«05» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2046 Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԱԼԱ ԳԱԼՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱ ՀԱՅՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լալա Գալոյանի 2025 թվականի սեպտեմբերի 02-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 03-ին 12984-2025 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Լալա Գալոյանին Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի այգու մուտքի մոտ գտնվող տարածքում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լեդ-էկրան) ընդհանուր 16 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 01-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Լալա Գալոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-05 10:32:52 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<04>> սեպտեմբերի 2025 թվականի N 2043-Ա

## ԿԱՐԵՆ ԴԵՐԵՆԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 10-րդ կետերով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2025 թվականի սեպտեմբերի 1-ի N 02.1//07419-2025 գրությունը, Կարեն Դերենիկի Գալստյանի 2025 թվականի օգոստոսի 15-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Կարեն Դերենիկի Գալստյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ( ծածկագիր՝ 2.1-8 ) ժամանակավոր պաշտոնակատար՝ 2025 թվականի սեպտեմբերի 5-ից:

**2.** Կարեն Դերենիկի Գալստյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ:

**3.** Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի՝ ամսական 372.000 (երեք հարյուր յոթանասուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Դերենիկի Գալստյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2025 թվականի № 2042-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Մ. ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑ 9/2 (ՎԿԱՅԱԿԱՆ №1993355) ԵՎ Մ. ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑ 9/6 (ՎԿԱՅԱԿԱՆ №02102012-08-0234) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Լևոն Համբարձումյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №12327 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Մ. Թետչերի փողոց 9/2 (վկայական №1993355) և Մ. Թետչերի փողոց 9/6 (վկայական №02102012-08-0234) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Թետչերի փողոց, 9/2 շինություն**

2025.09.04 14:54:38 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2025 թվականի № 2041-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի №1920–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 27-ի №1920–Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված հասարակական շինությանը, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մուշ-2 թաղամաս, 7/18 շինություն**

2025-09-04 13:18:41 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2025 թվականի №2040-Ա

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՋԻՎԱՆՈՒ (ՄԱՐՔՍԻ) ՓՈՂՈՑ 155 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գագիկ Հարությունյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №12328 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սեփականության իրավունքով քաղաքացի Գագիկ Հարությունյանին պատկանող Գյումրի քաղաք, Ջիվանու (Մարքսի) փողոց 155 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ջիվանու փողոց, 155/1 բնակելի տուն**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2039-Ա

**«ՂԱՐԻԲՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ 46/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Ղարիբյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ստեփան Ղարիբյանի (ՀՎՀՀ՝ 05546864, գրանցման ամսաթիվը՝ 2018 թվականի հունիսի 27-ին) 2025 թվականի սեպտեմբերի 02-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 02-ին 12842-2025 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել «Ղարիբյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ստեփան Ղարիբյանին Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 46/1 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ղարիբյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ստեփան Ղարիբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025-09-04 10:44:46 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թվական ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

« 04 » սեպտեմբերի 2025 թվականի № 2038-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՆԱՋԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 72Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Նաջարյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №12419 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Աշոտ Նաջարյանին պատկանող Գյումրի քաղաք, Կ. Դեմիրճյան փողոց 72ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Դեմիրճյան փողոց, 72/1 բնակելի տուն**

2025-09-04 14:53:45 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ու Մ

«_04_» _սեպտեմբերի_ 2025 **թվականի** N_2037-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՂԱՓՆՅԱ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության լողափնյա ըմբշամարտի երիտասարդների 2025 թվականի սեպտեմբերի 9–10–ը Ճամբարակ համայնքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ըմբշամարտի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 4-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության լողափնյա ըմբշամարտի երիտասարդների առաջնությանը գործուղման ծախսերի 2025 թվականի սեպտեմբերի 9–10–ը Ճամբարակ համայնք գործուղել 8 մարզիկի և 3 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (բոլոր ծախսերը) 211.200(երկու հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

**Հայաստանի Հանրապետության Շիրակի**
**մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.**
սեպտեմբերի 04-ի N 2037-Ա **որոշման**

**ԱՆՎԱՆԱՑԱՆԿ**

Հայաստանի Հանրապետության լողափնյա ըմբշամարտի երիտասարդների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հովսեփյան | Ավետիք | մարզիկ | AL0227713 | 1570041679286700 | 19.200 |
| 2. | Սահակյան | Գրիգոր | մարզիկ | AV0541481 | 2470094189520000 | 19.200 |
| 3. | Մկրտչյան | Հայկ | մարզիկ | AL0472652 | 1570099331750100 | 19.200 |
| 4. | Պապոյան | Սաշա | մարզիկ | AL0523367 | 1570058072410700 | 19.200 |
| 5. | Կիրակոսյան | Աղասի | մարզիկ | AL0200695 | 1570099170610100 | 19.200 |
| 6. | Գալստյան | Մարգարիտ | մարզիկ | 014474977 | 11802033849701 | 19.200 |
| 7. | Հարությունյան | Մարգարիտա | մարզիկ | AU0533761 | 2470077396980000 | 19.200 |
| 8. | Նիկոյան | Մերի | մարզիկ | AV0475143 | 11802055198200 | 19.200 |
| 9. | Խաչատրյան | Աշոտ | մրցավար | 014398119 | 1510031914270200 | 19.200 |
| 10. | Գալոյան | Գոռ | մարզիչ | 016647125 | 1570069829850100 | 19.200 |
| 11. | Պապոյան | Մանվել | մարզիչ | AX0236768 | 1510017390450300 | 19.200 |
| **Ընդամենը** | | | | | | **211.200** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«__04__» __սեպտեմբերի__ 2025 **թվականի** N__2036__-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻԱՄ ՏԱՐԱԽՉՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մարիամ Տարախչյանի 2025 թվականի օգոստոսի 27-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 27-ին 12513-2025 թվագրմամբ)՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Մարիամ Տարախչյանին Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի 17 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 27-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Մարիամ Տարախչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-04 12:00:03 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2035 Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԷԴԳԱՐ ԱԴԱՄՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 5 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր էդգար Ադամյանի 2025 թվականի օգոստոսի 22-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 27-ին 12502-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Էդգար Ադամյանին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա 5 Ա հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Էդգար Ադամյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2034 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի № 1061-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 12-ի «Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Լալայան փողոց N 74 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 198.07 քառակուսի մետր արտաքին (172.08 քառակուսի մետր ներքին) մակերեսով շինությունները օրինական ճանաչելու մասին» № 1061-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել (գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2025 թվականի հուլիսի 01-ի համար Կ-01072025-08-0217 ՀՀ Կադաստրի կոմիտեի որոշումը):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 12-ի «Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Լալայան փողոց N 74 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 198.07 քառակուսի մետր արտաքին (172.08 քառակուսի մետր ներքին) մակերեսով շինությունները օրինական ճանաչելու մասին» № 1061-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
    1) Վերնագրում «198.07» թիվը փոխարինել «181.41» թվով և «172.08» թիվը փոխարինել «145.45» թվով:
    2) Որոշման 1-ին կետում «198.07 (մեկ հարյուր իննսունութ ամբողջ յոթ հարյուրերորդական)» թիվը և բառերը փոխարինել «181.41 (մեկ հարյուր ութսունմեկ ամբողջ քառասունմեկ հարյուրերորդական)» թվով և բառերով, որոշման 1-ին կետում «172.08 (մեկ հարյուր յոթանասուներկու ամբողջ ութ հարյուրերորդական)» թիվը և բառերը փոխարինել «145.45 (մեկ հարյուր քառասունհինգ ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական)» թվով և բառերով:

2025-09-04 15:53 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2033-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍՈՒՍԱՆ ԼԻՊԱՐԻՏԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ (2/4 ՄԱՍ), ՀԵՐՄԻՆԵ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ (1/4 ՄԱՍ) ԵՎ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ (1/4 ՄԱՍ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Չ. ԵՍԱՅԱՆ ՓՈՂՈՑ № 43 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 81.76 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 120.46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Սուսան Լիպարիտի Ասատրյանին (2/4 մաս), Հերմինե Վարուժանի Ասատրյանին (1/4 մաս) և Արմենուհի Վարուժանի Ասատրյանին (1/4 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ տեխնիկական անձնագիր, համար4176) Գյումրի քաղաքի Չ. Եսայան փողոց № 43 հասցեի տան հողամասին կից ավել օգտագործվում է 120.46 (մեկ հարյուր քսան ամբողջ քառասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Հերմինե Վարուժանի Ասատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու և սեփական հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023PABZYW ծածկագրով մուտքագրման տեղեկանքը և քաղաքացի Հերմինե Վարուժանի Ասատրյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի մայիսի 12-ին № 5962 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացիներ Սուսան Լիպարիտի Ասատրյանին (2/4 մաս) (ծնված 1959 թվականի հունիսի 13-ին), Հերմինե Վարուժանի Ասատրյանին (1/4 մաս) (ծնված 1982 թվականի սեպտեմբերի 20-ին) և Արմենուհի Վարուժանի Ասատրյանին (1/4 մաս) (ծնված 1981 թվականի հոկտեմբերի21-ին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Չ. Եսայան փողոց № 43 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 120.46 (մեկ հարյուր քսան ամբողջ քառասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա բնակելի շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացիներ Սուսան Լիպարիտի Ասատրյանին (2/4 մաս), Հերմինե Վարուժանի Ասատրյանին (1/4 մաս) և Արմենուհի Վարուժանի Ասատրյանին (1/4 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Չ. Եսայան փողոց № 43 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 81.76 (ութսունմեկ ամբողջ յոթանասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հերմինե Վարուժանի Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-09-03 12:08:03 GMT+4
Հաստատված է էլեկտրոնային կերպով

mID

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«04» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2032-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ 61/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Անի Կարապետյանի 2025 թվականի օգոստոսի 20-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 26-ին 12442-2025 թվագրմամբ)՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Անի Կարապետյանին Գյումրի քաղաքի Գորկու 61/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Անի Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-04 12:16:09 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<03>> սեպտեմբերի 2025 թվականի N 203/-Ա

### ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ի նքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Էդվարդ Վարդանի Բաղրամյանի 2025 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Էդվարդ Վարդանի Բաղրամյանին պայմանագրային հիմունքներով 2025 թվականի սեպտեմբերի 4-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի փորձագետ՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

**2.** Ամսական աշխատավարձի չափը սահմանել 328.000 ( երեք հարյուր քսանութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդվարդ Վարդանի Բաղրամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<03>> սեպտեմբերի 2025 թվականի N 2030-Ա

**ՆԵԼԼԻ ՀԱՄԼԵՏԻ ՊԱՊՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ի նքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Նելլի Համլետի Պապոյանի 2025 թվականի օգոստոսի 29-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Նելլի Համլետի Պապոյանին պայմանագրային հիմունքներով 2025 թվականի սեպտեմբերի 4-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի փորձագետ՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

**2.** Ամսական աշխատավարձի չափը սահմանել 328.000 ( երեք հարյուր քսանութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նելլի Համլետի Պապոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<03>> սեպտեմբերի 2025 թվականի N 2029-Ա

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՈՒՐԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հովհաննես Սուրենի Կարապետյանի 2025 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.**Հովհաննես Սուրենի Կարապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի օգնականի պաշտոնում՝ 2025 թվականի սեպտեմբերի 4-ից:

**2.** Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի՝ ամսական 355.000 (երեք հարյուր հիսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**3**. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Սուրենի Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<< 03 >> սեպտեմբերի 2025 թվականի N 2028-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՀԱՎԵՐԺ ՀԻՇԱՏԱԿ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Էդվարդ Վարդանի Բաղրամյանի 2025 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Հավերժ հիշատակ >> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդվարդ Վարդանի Բաղրամյանին 2025 թվականի սեպտեմբերի 4-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդվարդ Վարդանի Բաղրամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«_03_» _սեպտեմբերի_ 2025 **թվականի** N_2027_Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌԱՖԱՅԵԼ ՍՈՒԼԹԱՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 5/13 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռաֆայել Սուլթանյանի 2025 թվականի օգոստոսի 27-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 27-ին 12511-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռաֆայել Սուլթանյանին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա 5/13 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռաֆայել Սուլթանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-03 14:26:46 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» սեպտեմբերի 2025 թվականի N 2026-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵԴԱ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 43/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սեդա Սահակյանի 2025 թվականի օգոստոսի 25-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 25-ին 12318-2025 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Սեդա Սահակյանին Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 43/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 0.46 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 25-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Սեդա Սահակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-03 13:24:03 GMT-4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«03» սեպտեմբերի 2025 թվականի N 2025Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԴՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ 76 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հովհաննես Սանդոյանի 2025 թվականի օգոստոսի 27-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 27-ին 12510-2025 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հովհաննես Սանդոյանին Գյումրի քաղաքի Մուսայելյան 76 Ա հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հովհաննես Սանդոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-03 14:08:33 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«_03_» _սեպտեմբերի_ 2025 **թվականի** N_2024_Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 48/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ամալյա Գրիգորյանի 2025 թվականի օգոստոսի 22-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 25-ին 12317-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ամալյա Գրիգորյանին Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 48/2 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1.2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ամալյա Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-03 13:09:30 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԴ-ի կողմից

miD

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

3

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«03» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2023-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌԱՖԻԿ ՄԱԼՈՒՄՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ 26/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռաֆիկ Մալումյանի 2025 թվականի օգոստոսի 27-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 28-ին 12589-2025 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռաֆիկ Մալումյանին Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհ 26/10 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1.2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռաֆիկ Մալումյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**